տալու համար հզօրին ու զօրաւորին ճընշումներուն և բռնութեանց։

Ահա անոնցմէ մէկն էր Գրիգոր վրդ. Կեսարացի, որուն հակառակորդներն իսկ չհամարձակեցան արատաւորել իր անձնական անբասիր կեանքը, որ ամէն կողմէ վկայուած է և այս էր թերևս այն ոյժը, որ զինքը կարող կը դարձնէր «յաղթող ախոյեան» հանդիսանալու «ընդդէմ մախանողաց ճշմարտութեան, երկ մերասերից եւ երկ այլոց ազգաց»։

Արդարև, ինչպէս տեսնուեցաւ, անիկա ոչ միայն պարտաւորուած էր մաքառելու Մելքիսեդեկ Գառնեցիներու, Յովհաննէս Թուլերու և Զաքարիա Վանեցիներու պէս տիպարներու դէմ, որոնք մենէ էին, այլ նաև Ֆրանսայի դեսպանին, պապական նուիրակին և անոնցմէ շահուած թուրք պաշտօնատարներու դէմ, որոնք օտար էին։ Եւ ասոնց դէմ կռուելու համար միայն իր անձնական արժանիքներն ունէր և տատանուող ժողովուրդի մը տառապակոծ զանգուածներուն մէջ պլպլացող բնազդային ողջմտութիւնը։

Արդարև, ինչպէս կը տեսնուի, Կեսարացին հազուագիւտ տիպարներէն մէկն է իր դարուն, որ հազիւ մատի վրայ համրուող դէմքեր ունի իր նկարագրով։